


ԲԱՆԲԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍՈՐԱՆԻ



ВЕСТНИК

АРМЯНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО
ЭКОНОМИЧЕСКОГО УНИВЕРСИТЕТА

MESSENGER

OF ARMENIAN STATE UNIVERSITY OF ECONOMICS

2021 [4]
ԵՐԵՎԱՆ



ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ՀԱԿՈՒԹԱՐՓՈՇՅԱՆ

Հայաստանի պետական կառավարման ակադեմիայի ասպիրանտ

ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅՈՒՆԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Նորարարությունը անհրաժեշտ է շարժիչ ուժն է, որը հաճախ մշակվում և հիմնականում իրագործվում է ձեռնարկությունների առանձին շերտի՝ նորարարական ձեռնարկափրության կողմից: Այս ոլորտը բավականին նոր գիտական ուղղություն է, թեև նորարարական ձեռնարկափրությունը կենսական դեր է խաղում անհատական, սոցիալական և բնապահպանական հիմնախնդիրների լուծման գործում:

Սույն հետազոտության շրջանակներում նախ ուսումնասիրվել է նորարարության և նորարարական ձեռնարկափրության էությունը: Գրականության ամփոփման արդյունքում մշակվել է նորարարական ձեռնարկափրության ամբողջական սահմանման հայեցակարգ, ինչը հետագա գիտական հետազոտությունների և վիճակագրական վերլուծությունների համար կարող է որպես մեթոդաբանություն ծառայել: Հասկանալու համար նորարարական ձեռնարկափրության ոլորտում երկրների ներուժը, կատարվել են փոքր երկրներում դրա մակարդակի վերաբերյալ առկա տվյալների համեմատական վերլուծություններ, այդ թվում՝ ձեռնարկափրական մոտիվացիայի մակարդակի հետ համադրության միջոցով: Բացի դրանից, անհրաժեշտ է նորարարական ձեռնարկափրության դերի մասին պատկերացում կազմելու նպատակով կատարվել է նորարարական ձեռնարկափրության մակարդակի և անհատությունը բնութագրող այլ գործոնների միջև կապի վերլուծություն: Վերջինս կարող է դառնալ նոր մոտեցում Հայաստանում նորարարության և նորարարական ձեռնարկափրության ոլորտում հետագա հետազոտությունների համար:

Հիմնաբառեր. *ձեռնարկատիրություն, նորարարություն, նորարարական ձեռնարկատիրություն, ձեռնարկատիրական մտքիվացիա, կայուն զարգացման նպատակներ (ԿՁՆ)*

JEL: L26, O32

DOI: 10.52174/1829-0280_2021_4_140

Ներածություն: Ժամանակակից տնտեսությունը բարդ և բազմագործոն համակարգ է, որի հիմնական գործառույթը վաղուց չի սահմանափակվում միայն մարդկանց և տնտեսության մյուս սուբյեկտների միջև ռեսուրսների բաշխմամբ և դրանց սպառմամբ:

Սահմանափակ ռեսուրսների միջոցով հասարակության կարիքների բավարարման համատեքստում ռեսուրսների արդյունավետ օգտագործման հիմնախնդիրը դարձել է հրամայական տնտեսության սուբյեկտների որոշումների կայացման և տնտեսության միտումների համար:

Գաղտնիք չէ, որ ռեսուրսների օգտագործման արդյունավետության մակարդակի բարձրացմանն առավել մեծ նպաստ ունի նորարարությունը: Ցանկացած տնտեսական միջավայրում նորարարությունը աշխատանքի արտադրողականության, աճի և մրցունակության ապահովման կարևոր գործոն է:

Պետք է փաստել, որ նորարարությունը հաճախ մշակվում և հիմնականում իրագործվում է մասնավոր հատվածում՝ ձեռնարկությունների առանձին շերտի կողմից, որոնք, ըստ էության, ստանձնում են առավել մեծ պատասխանատվություն՝ դիրքավորվելով որպես նորարարական ձեռնարկություններ:

Այստեղից հետևում է, որ այսօր ծառայած համաշխարհային հիմնախնդիրների լուծման համատեքստում կարևոր է նորարարական ձեռնարկատիրության ուսումնասիրությունը, վերլուծությունն ու խթանումը, քանի որ դա սահմանափակ ռեսուրսների արդյունավետ օգտագործման միջոց է:

Գրականության ակնարկ: Ձեռնարկատիրության և նորարարության միջև կապը և տնտեսական զարգացման մեջ այդ գործոնի դերը կարևորվեց Շումպետերի «Տնտեսական զարգացման տեսություն» աշխատությունում: Գրքում հեղինակը ձեռնարկատիրոջը ներկայացնում է որպես նորարարություն ներմուծող և տնտեսական զարգացման խթանման առանցքային կերպար: Ըստ նրա՝ նորարարությունը «արդյունաբերական մուտացիայի գործընթաց է. դա անընդհատ հեղափոխում է տնտեսության կառուցվածքը ներսից՝ անդադար ոչնչացնելով հինը և ստեղծելով նորը¹»:

Նորարարության մասին Շումպետերը հայտնի է «ստեղծագործական ոչնչացում» («creative destruction») գաղափարով, համաձայն որի, ներկայացնելով նոր արտադրանք կամ տեխնոլոգիական նորարարություն, ձեռնարկատերերը խախտում են շուկայի հավասարակշռությունը՝ դուրս մղելով ցածր արտադրողականություն ունեցող ընկերություններին, ինչը, իր հերթին, ստեղծում է ավելի մրցակցային միջավայր և նպաստում շուկայի միջին արտադրողականության բարձրացմանն ու տնտեսական աճին²:

¹ Schumpeter J.A., The theory of economic development, Cambridge, MA: Harvard University Press, 1934, p. 255.

² Տե՛ս նույն տեղը:

Ի տարբերություն Շումպետերի, ով պնդում էր, որ նորարարությանը բնորոշ են նոր ձեռնարկատիրության արմատական փոփոխություններ, Ուիլյամ Բաումոլն այն կարծիքի է, որ նոր ձեռնարկատերերը պարտավոր չեն հանդես գալ նորարարական մոտեցումներով: Նա և մի շարք այլ տնտեսագետներ վստահ են, որ ձեռնարկատերերի դերը փոփոխություններ որոնելն է հենց ձեռնարկատիրական գործունեության առօրյայում³:

Նորարարությունն ուսումնասիրվել է տարբեր տնտեսագետների կողմից, տրվել են մի շարք բնորոշումներ. դրանք կարելի է որոշակիորեն ամբողջացնել՝ օգտագործելով Հենրի Էդիսոնի կողմից 2013 թվականին տրված սահմանումը, ով փորձել է ամփոփել առավել տարածված տեսությունները նորարարության վերաբերյալ: Ըստ այդ սահմանման՝ նորարարությունը տնտեսական և սոցիալական ոլորտներում հավելյալ արժեք ստեղծող նորամուծության ներդրում կամ ստեղծում է, դրա հարմարեցում կամ շահագործում, ապրանքների, ծառայությունների և շուկաների նորացում և ընդլայնում, արտադրության նոր եղանակների ստեղծում և կառավարման նոր համակարգերի հիմնում: Ըստ Էդիսոնի՝ նորարարությունը ինչպես գործընթաց, այնպես էլ արդյունք է⁴:

Արտադրանքի (ծառայությունների) ստեղծման և գործընթացի տեսանկյունից՝ նորարարությունը կարելի է սահմանել նաև որպես նոր կամ նշանակալիորեն կատարելագործված արտադրանքի (ապրանքի կամ ծառայության) կամ գործընթացի, նոր մարքեթինգային մեթոդի կամ կազմակերպչական մեթոդի իրականացում: Այս սահմանումը Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) հանրահայտ «Օսլոյի ձեռնարկի» ուղենիշն է և ՀՀ ՎԿ-ի կողմից օգտագործվել է Հայաստանում 2017 թվականին «Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի նորարարական գործունեության փորձնական հետազոտության» իրականացման համար⁵:

Կարելի է ասել նաև, որ նորարարությունն արդիականացումն ու արտադրողականության մակարդակի բարձրացումն է, որը պարտադրված կամ ոչ պարտադրված կերպով ստեղծվում և իրականացվում է տնտեսության կազմակերպման մասնակիցների, հիմնականում՝ ձեռնարկությունների կողմից⁶:

Տնտեսագիտական գրականության մեջ ձեռնարկատիրության կամ նորարարության թեմայի ուսումնասիրությունն ուղեկցվում է մեկը մյուսի հետ համադրությամբ, ինչը փաստում է դրանց սերտ կապը: Տնտեսական աճի և զարգացման վրա ձեռնարկատիրության և նորարարության ազդեցության վերաբերյալ կա երկու հայտնի ուղղություն. մեկը հիմնված է հորիզոնական նորարարության աճի մոդելների վրա, որի գաղափարը նորարարության մի-

³ Տե՛ս **Baumol W.J.**, *Entrepreneurship, management, and the structure of payoffs*. Cambridge, MA: MIT Press, 1993, էջ 312: **Drucker P.**, *Innovation and entrepreneurship: Practice and principles*. New York: Harper & Row, 1985, էջ 108-109:

⁴ Տե՛ս **Edison H., Ali N.B., Torkar R.**, *Towards innovation measurement in the software industry*. *Journal of Systems and Software*, No 86(5), 2013, էջ 1394:

⁵ Տե՛ս ԱՎԿ, *Մեթոդաբանական նշումներ ինովացիայի վիճակագրության վերաբերյալ*, 2017, էջ 8, https://www.armstat.am/file/article/met__notes_for_innovation_statistics_arm.pdf

⁶ Տե՛ս **Marta Peris-Ortiz, João J.M. Ferreira, Cristina I. Fernandes**, *Do total early-stage entrepreneurial activities (TEAs) foster innovative practices in OECD countries?* 2017, էջ 8:

ջոցով տեսականու և բազմազանության աճի վրա կենտրոնացումն է⁷: Մյուս ուղղությունը, որն առավել տարածված է, հիմնվում է նորարարության ուղղաձիգ աճի մոդելների վրա և միտված է որակի բարձրացմանը⁸:

Մի շարք տնտեսագետներ տարբերակում են ձեռնարկատիրության երկու հիմնական տեսակ⁹ «սովորական» (կամ «իմիտացիոն») և «նորարարական»: Առաջինի դեպքում հասարակության համար հիմնական ավելացված արժեքը աշխատատեղերի ստեղծումն է, իսկ «նորարարական» ձեռնարկատիրությունը նպաստում է արտադրողականության և ավելացված արժեքի ավելացմանը, հարստության ստեղծմանը¹⁰:

Հատկապես նախորդ երկու տասնամյակների ընթացքում ավելացել է նորարարական ձեռնարկատիրության հանդեպ հետաքրքրությունը, ինչը հիմնականում պայմանավորված է նրանով, որ նորարարական ձեռնարկատիրությունը դրական կերպով է նպաստում թե՛ տնտեսական աճին, թե՛ սոցիալական ու բնապահպանական խնդիրների լուծմանը ոչ միայն երկրի,¹¹ այլ նաև ավելի նեղ՝ համայնքային մակարդակում¹²:

Նորարարական ձեռնարկատիրությունը «սովորական» ձեռնարկություններից տարանջատման խնդիրն արժանացել է բազմաթիվ տնտեսագետների ուշադրությանը¹³: Եթե ամփոփենք գիտական հետազոտությունների՝ մեր կողմից կատարված ուսումնասիրությունը, ապա կարելի է ասել, որ նորարար-

⁷ Տե՛ս **Romer P.**, Endogenous technological change. *Journal of Political, Economy*-98, 1990 էջ 71-72:

⁸ Տե՛ս **Schumpeter J.A.**, The theory of economic development, Cambridge, MA: Harvard University Press, 1934, էջ 257: **Aghion Ph., Howitt P.**, A model of growth through creative destruction. *Econometrica*, 60(2), 1992, էջ 323:

⁹ Տե՛ս **Waasdorp P.**, Innovative entrepreneurship: A Dutch policy perspective in *Entrepreneurship in the Netherlands: Innovative entrepreneurship. New policy challenges: Snijders J., Laag A. van der*, (Ed.), EIM Business & Policy Research, 2002, էջ 27, 42:

Տե՛ս **Dahlstrand Å. L., Stevenson L.**, innovative entrepreneurship policy: Linking innovation and entrepreneurship in a European, *Annals of Innovation & Entrepreneurship*, vol.1, 2010, էջ 1-2:

¹⁰ Տե՛ս նույն տեղը:

¹¹ Տե՛ս **Acs Z.J., Desai S., Hessels J.**, Entrepreneurship, economic development and institutions. *Small Bus Econ* 31, 2008, էջ 232: Gemconsortium, «GEM 2013 Global Report», էջ 13, 38-40:

Aparicio S., Urbano D., Gómez D., The role of innovative entrepreneurship within Colombian business cycle scenarios: A system dynamics approach. *Futures*, 2016, էջ 132-134, 141-145:

Տե՛ս **Carlsson B., Braunerhjelm P., McKelvey M., Olofsson C., Persson L., Ylinenpää H.**, The evolving domain of entrepreneurship Research. *Small Bus Econ*, 41, 2013, էջ 926-927: **Reynolds P., Bosma N., Autio E., Hunt S., De Bono N., Servais I., Chin N.**, Global entrepreneurship monitor: Data collection design and implementation 1998-2003. *Small Bus Econ*, 24, 2005, էջ 226:

¹² Տե՛ս **Audretsch D.B., Bönnte W., Keilbach M.**, Entrepreneurship capital and its impact on knowledge diffusion and economic performance, *J Bus Venturing* 23, 2008, էջ 696: **Bosma N.**, The Geography of Entrepreneurial Activity and Regional Economic Development. *Utrecht University*, 2009, էջ 165: **Dejardin M.**, Linking net entry to regional economic growth, *Small Bus Econ*, 36, 2011, էջ 456-457: **Feldman M.P.**, The character of innovative places: entrepreneurial strategy, economic development, and prosperity. *Small Bus Econ*, 43, 2014, էջ 18-19:

¹³ Տե՛ս **Cliff J. E., Jennings P. D., Greenwood R.**, New to the game and questioning the rules: The experiences and beliefs of founders who start imitative versus innovative firms. *Journal of Business Venturing*, 21 (5), 2006, էջ 658: **Dyer J. H., Gregersen H. B., Christensen C.**, Entrepreneur Behaviors, Opportunity Recognition and the Origins of Innovative Ventures. *Strategic Entrepreneurship Journal*, 2 (4), 2008, էջ 335: **Simmons S., Wiklund J., Levie J.**, Stigma and business failure: Implications for entrepreneurs' career choices. *Small Business Economics*, 42 (3), 2014, էջ 501-502:

րական է այն ձեռնարկատիրությունը, որը շուկայում հանդես է գալիս նորարարությամբ՝ նոր ապրանք/ծառայությունով կամ ներքին ընթացակարգերում ներմուծում է նախկինից բարձր արդյունքի ստեղծմանը նպաստող գործիքակազմ: Ըստ այդմ՝ նորարար ձեռնարկատերեր են համարվում նրանք, ովքեր կարողանում են նորարարական գաղափարները վերածել պահանջարկի՝ վաճառվող ապրանքների, ծառայությունների կամ տեխնոլոգիաների, հետևաբար՝ նորարարությունները նրանց համար առանձնահատուկ՝ եկամուտներ ապահովելու գործիքի դեր են կատարում:

Քանակական ուսումնասիրությունները փաստում են, որ մեկ շնչի հաշվով ՀՆԱ իրական աճի և նորարարական ձեռնարկատիրության միջև առկա է դրական փոխկախվածություն, մինչդեռ «սովորական» և նույնիսկ մեծ աճ արձանագրող ձեռնարկությունների դեպքում կապը բացակայում է կամ ամուր չէ¹⁴: Փաստորեն, նորարարական ձեռնարկատիրությունն ընկալվում է որպես տնտեսական աճին և ռեսուրսների արդյունավետ բաշխմանը դրականորեն նպաստող գործոն¹⁵:

Հետազոտության մեթոդաբանություն: Հաշվի առնելով հոդվածի նպատակը՝ նախ իրականացվել է նորարարական ձեռնարկատիրության վերաբերյալ գրականության ուսումնասիրություն և վերլուծություն: Բացի դրանից, նպատակ ունենալով հասկանալու նորարարական ձեռնարկատիրության էությունը, օգտագործվել են դրա վերաբերյալ տվյալների բազաներ՝ երկրների և տարածաշրջանների միջև համեմատություններ կատարելու, ինչպես նաև նորարարական ձեռնարկատիրության և տնտեսությունը բնութագրող այլ գործոնների միջև կապը գնահատելու համար:

Հետազոտության ընթացքում հիմնականում կիրառվել են համեմատական ուսումնասիրությունների, ընդհանուր գիտական վերլուծության, խմբավորումների, ընդհանրացումների մեթոդները:

Այսպես՝ հետազոտության համար որպես գիտական հիմք են հանդիսացել տեսաբանների, մասնավորապես՝ նորարարության և նորարարական ձեռնարկատիրության թեմաներն ուսումնասիրած տնտեսագետների հրատարակած գիտական աշխատանքները: Դիտարկվող ոլորտում առավել ազդեցիկ հեղինակներից են Շումպետերը, Բաումոլը, Ապարիսիոն, Ուրբանոն, Հենրեքսոնը, Դրուբերը, Սթիվենսոնը Ջոյթեն Ակը, որոնց ուսումնասիրություններին առավել մեծ ուշադրություն է հատկացվել: Հաշվի առնելով, որ նորարարական ձեռնարկատիրությունը գիտական համեմատաբար նոր ուղղություն է, առանձնակի ուշադրություն է դարձվել հատկապես ժամանակակից հեղինակներին և թարմ գրականությանը: Գրականության ուսումնասիրության, համեմատության և համադրության արդյունքում մշակվել է թեմայի գրականության համակարգված ամփոփում:

Քանակական վերլուծությունների համար որպես տեղեկատվական աղբյուր են ծառայել ձեռնարկատիրության վերաբերյալ վիճակագրության հա-

¹⁴ Տե՛ս **Ordeñana X., Vera-Gilces P., Zambrano-Vera J.**, High-growth or innovative entrepreneurship, who is leading the way to economic growth? A panel data approach, 2019, էջ 22-24:

¹⁵ Տե՛ս **Henrekson M., Johansson D.**, Gazelles as job creators: a survey and interpretation of the evidence, Small business economics, 35(2), 2010, էջ 240-241:

վաքագրմամբ և ուսումնասիրությամբ ավելի քան 22 տարի 115 երկրներում զբաղվող «Ձեռնարկությունների համաշխարհային մոնիտորի» («Global Entrepreneurship Monitor» (GEM))¹⁶ կողմից մշակված նորարարական ձեռնարկատիրությանն առնչվող տվյալները: Քանակական վերլուծության նպատակով օգտագործվել են նաև տվյալներ Համաշխարհային տնտեսական ֆորումի կողմից մշակված Համաշխարհային մրցունակության զեկույցից¹⁷ և Համաշխարհային նորարարության ինդեքսից¹⁸:

Նորարարական ձեռնարկատիրությունն ու տնտեսությունը բնութագրող այլ գործոնների միջև կապը գնահատելու նպատակով նորարարական ձեռնարկատիրության վերաբերյալ տվյալները վերլուծվել են Համաշխարհային բանկի կողմից մշակված «World Bank Open Data» տվյալների բազայում առկա՝ մեկ շնչի հաշվով ՀՆԱ (գնողունակության համարժեքության դրույքաչափով) ցուցանիշի, Ջինիի գործակցի, գործազրկության մակարդակի և աղքատության ցուցանիշի հետ համադրության միջոցով:

Վերլուծություն: Երկրների միջև նորարարական ձեռնարկատիրության տարբերությունները գնահատելու և դրա առանձնահատկությունները վերհանելու նպատակով՝ օգտագործվել է Ձեռնարկատիրության համաշխարհային զեկույցի կողմից մշակված նորարարական ձեռնարկատիրության մակարդակի ցուցանիշը: Վերջինս, ըստ զեկույցի մեթոդաբանության, սահմանվում է որպես այն ձեռնարկությունների կշիռ, որոնք նշում են, որ իրենց արտադրանքը կամ ծառայությունը նոր է առնվազն որևէ մի շուկայում, և որ քիչ թվով կամ ոչ մի մրցակից ձեռնարկություն չի առաջարկում նույն արտադրանքը:


Այսպես՝ տվյալները փաստում են, որ նորարարական ձեռնարկատիրության ցուցանիշով առաջատարը Լյուքսեմբուրգն է, որտեղ սկսնակ ձեռնարկատիրության մեջ ներգրավվածների գրեթե կեսը (47,9%-ը) նշում են, որ ձեռնարկությունը, որում ներգրավված են, ունի նոր ապրանք կամ ծառայություն: Լյուքսեմբուրգին հաջորդում են Չիլին (47,6%) և Հնդկաստանը (46,9%):

Նախ պետք է փաստել, որ նորարարական ձեռնարկատիրության մակարդակի վրա տարածաշրջանի ազդեցությունը շատ թույլ է: Չնայած Հարավային Աֆրիկայի երկրներում նորարարական ձեռնարկատիրության մակարդակի համեմատաբար ցածր լինելուն, մյուս տարածաշրջաններում միջին ցուցանիշները միմյանց բավականին մոտ են: Բացի դրանից, առկա տվյալների հիման վրա մեր մշակված ռեգրեսիոն մոդելը նույնպես փաստում է նորարարական ձեռնարկատիրության վրա տարածաշրջանի ազդեցության չափազանց թույլ լինելու մասին:

¹⁶ Տե՛ս <https://www.gemconsortium.org/about/gem/1874>

¹⁷ Տե՛ս «Համաշխարհային մրցունակության զեկույց», <https://www.weforum.org/reports/the-global-competitiveness-report-2020>

¹⁸ Տե՛ս Համաշխարհային նորարարության ինդեքս, https://www.wipo.int/global_innovation_index/en/



Գծապատկեր 1. Նորարարական ձեռնարկատիրության մակարդակը (2018 թ. և 2019 թ. տվյալներ), %¹⁹


Ակնհայտ է, որ զարգացած երկրներում առավել բարձր է նորարարական ձեռնարկատիրության մակարդակը, թեև Չինիև Հնդկաստանը շեղվում են այս օրինաչափությունից: Նույն արդյունքն է փաստում նաև վիճակագրական գնահատականը. եկամուտների և նորարարական ձեռնարկատիրության մակարդակի միջև առկա է որոշակի դրական կապ (Corr. = 0.43):

Այս կապի առկայության մասին է վկայում նաև մի շարք այլ աղբյուրներում առկա տվյալների ուսումնասիրությունը, այսպես՝ Համաշխարհային մրցունակության զեկույցի 12-րդ ցուցանիշը,²⁰ այն է՝ երկրում նորարարության կարողությունը և Համաշխարհային նորարարության ինդեքսի²¹ նորարարության ելքային ենթաինդեքսը:

¹⁹ Գծապատկերը մշակել է հեղինակը, տվյալները՝ GEM տվյալների բազա, <https://www.gemconsortium.org/data/key-aps>

²⁰ Տե՛ս «Համաշխարհային մրցունակության զեկույց», <https://www.weforum.org/reports/the-global-competitiveness-report-2020>

²¹ Տե՛ս Համաշխարհային նորարարության ինդեքս, https://www.wipo.int/global_innovation_index/en/



Գծապատկեր 2. *ա) Նորարարության ելքային ենթահնդեքսի և մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի միջև կապը, բ) նորարարության կարողության և մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի միջև կապը (2020 թ.)²²*

Ինչպես կարելի է տեսնել, մեկ շնչի հաշվով ՀՆԱ և այս երկու ցուցանիշների համադրությունն առավել ակնառու է դարձնում եկամուտների և նորարարության միջև կապը:

Նման կապի առկայությունը, իհարկե, կարելի է բացատրել նրանով, որ նորարարությունը հաճախ պահանջում է երկարաժամկետ ներդրումներ, իսկ երկարաժամկետ ներդրումներ կատարելու հնարավորություններն առավել մեծ են բարձր եկամուտներ ունեցող երկրների շրջանում, մինչդեռ ցածր և միջին եկամուտներ ունեցող երկրներում թե՛ պետությունը և թե՛ մասնավոր հատվածում գործող սուբյեկտները ստիպված են եկամուտների մեծ կշիռը տրամադրել ընթացիկ ծախսերի իրականացմանը:

Հայաստանը 50 երկրների շարքում այս ցուցանիշով 27-րդ տեղում է: Կարևոր է նաև այս ցուցիչը համադրել սկսնակ ձեռնարկատիրության մակարդակի հետ (ձեռնարկություններ, որոնց առաջին վաճառքից չի անցել ավելի քան 42 ամիս): Սկսնակ ձեռնարկատիրության մակարդակով Հայաստանը առաջատարների շարքում է՝ 7-րդ տեղում, այսինքն՝ կարելի է փաստել, որ չնայած այլ երկրների համեմատությամբ Հայաստանում շատ են ձեռներեցության ձգտում ունեցողները, նրանց մեծ մասին չի հաջողվում դառնալ նորարար ձեռնարկատեր: Այս փաստը խոսում է նորարարական կարողության, ենթակառուցվածքների ոչ բավարար մակարդակի մասին:


Միևնույն ժամանակ, տվյալները փաստում են, որ հայերն իրենց շատ ավելի են նորարար համարում են, քան իրականում է: Այսպես՝ Հայաստանում յուրաքանչյուր 5-ից 4-ը հաստատում է, որ «մարդիկ իրեն շատ նորարար են համարում», և այս ցուցանիշով Հայաստանը նորարարության վերաբերյալ առավել բարձր ինքնագնահատական ունեցող երկրների տասնյակում է (8-րդը՝ 50-ից և 2-րդը՝ Արևելյան Եվրոպայի 9 երկրից): Այսպիսի տար-

²² Գծապատկերները մշակել է հեղինակը:

բերությունը ցույց է տալիս, թե որքան է գերազնահատված նորարարության մակարդակը երկրում: Չի կարելի չնշել, որ մի շարք այլ երկրներում նույնպես այս երևույթն առկա է, սակայն Հայաստանը գերազնահատման մակարդակով առաջիններից է²³: Այսինքն՝ Հայաստանում նորարարությունը և նախաձեռնողականությունը գործնականում բավականաչափ չեն իրագործվում:

Տվյալները վկայում են նաև, որ ինչպես Հայաստանի, այնպես էլ որոշ այլ երկրների պարագայում ձեռնարկությունների կողմից ներկայացված նոր ապրանքը, ծառայությունը մեծ մասամբ նոր են միայն տվյալ երկրի կամ համայնքի մակարդակում, իսկ համաշխարհային շուկայում նորարարությունները բավական հազվադեպ են,²⁴ ինչի պատճառներից է միջազգային մակարդակում առավել խիստ մրցակցությունը:

Նորարարական ձեռնարկատիրության մակարդակը և տնտեսության միջև կապն առավել մանրամասն հասկանալու համար մենք դրանք և մի քանի մակրոտնտեսական ցուցանիշներ համադրել ենք: Հիմնական արդյունքները պատկերված են գծապատկեր 3-ում:



Գծապատկեր 3. Նորարարական ձեռնարկատիրության մակարդակի և տնտեսական ցուցանիշների կապն ըստ երկրների (%)²⁵

Եկամուտների և նորարարական ձեռնարկատիրության մակարդակի միջև առկա դրական կապն արդեն քննարկվեց վերևում: Հարկ է նշել, որ նորարարական ձեռնարկատիրությունը փոխկապված է ոչ միայն եկամուտների մակարդակի, այլ նաև եկամուտների շերտավորման աստիճանը ցույց տվող Զինիի գործակցի հետ: Կապը, ինչպես կարելի էր ակնկալել, բացասական է. որքան բարձր է Զինիի գործակցը, այնքան երկրում անհավասար են բաշխ-

²³ Տե՛ս «Ձեռնարկատիրության համաշխարհային զեկույց. Հայաստան - 2019/2020»:
²⁴ Տե՛ս GEM Consortium, Global Entrepreneurship Monitor, 2020 Global Report:
²⁵ Գծապատկերները մշակել է հեղինակը, տվյալները՝ Gemconsortium, GEM տվյալների բազա, <https://www.gemconsortium.org/data/key-aps>, Համաշխարհային բանկի տվյալների բազա:


վում եկամուտները: Փաստորեն, որքան բարձր է նորարարական ձեռնարկության մակարդակը երկրում, այնքան ավելի հավանական են իրական բարձր եկամուտները և դրանց համաչափ բաշխումը:

Պետք է նշել նաև, որ նորարարական ձեռնարկատիրության մակարդակի և գործազրկության մակարդակի, ինչպես նաև նորարարական ձեռնարկատիրության մակարդակի և աղքատության մակարդակի միջև փոխադարձ ակներև կապ չի հայտնաբերվել:

Նորարարական ձեռնարկատիրության մակարդակից բացի նաև սոցիալ-տնտեսական բարելավումների հասնելու և առավել մեծ արժեք ստեղծելու կարևոր գրավական է ձեռնարկատիրությամբ զբաղվելու դրդապատճառի՝ մոտիվացիայի ուսումնասիրությունը, քանի որ, դրանցից կախված, ձեռնարկատերը կարող է ունենալ այնպիսի սպասումներ և ձգտումներ, որոնք կարող են ազդել նորարարական ձգտումների և արդյունքի վրա²⁶:

Ընդհանուր առմամբ, ձեռնարկատիրությամբ զբաղվելու մոտիվացիան կարելի է բաժանել երկու խմբի. անհրաժեշտությունից դրդված, ինչպես օրինակ՝ ապրուստի միջոց վաստակելու համար, և բարելավմանն ուղղված, ինչպես օրինակ՝ աշխարհը փոխել փորձելու համար:

Հասկանալու համար, թե ինչպես են երկրները բաշխվում ըստ նորարարական ձեռնարկատիրության և ձեռնարկատիրությամբ զբաղվելու մոտիվացիայի հարթությունների վրա, մենք մշակել ենք մատրից, որի մի առանցքում երկրներն են՝ ըստ նորարարական ձեռնարկատիրության մակարդակի, իսկ մյուսում՝ ըստ մոտիվացիայի ինդեքսի: Վերջինս բարելավմանն ուղղված մոտիվացիայի և անհրաժեշտությունից դրդված մոտիվացիայի ցուցանիշների հարաբերությունն է (գծապատկեր 4):



Գծապատկեր 4. Ձեռնարկատիրական մոտիվացիայի և նորարարության մատրից²⁷

²⁶ St' u Urbano D., Aparicio S., Querol V., Social progress orientation and innovative entrepreneurship: an international analysis, 2016, էջ 1041, 1055:

²⁷ Գծապատկերը մշակել է հեղինակը, տվյալներ՝ GEM 2018 թ., 2019 թ., 2020 թ.:

Այս գործոնների համադրության միջոցով կարելի է երկրները դասակարգել չորս խմբի՝

- I քառորդ՝ «առաջ մղող». երկրներ, որոնք նորարար են, և որոնց նպատակը դրական փոփոխություններն են:
- II քառորդ՝ «հարկադրված նորարար». երկրներ, որոնցում բարելավելու մոտիվացիան համեմատաբար ցածր է, սակայն, չնայած դրան, նորարարությունները տարածված են (ինչը, ըստ մեզ, կարող է պայմանավորված լինել շուկայական յուրահատուկ մրցակցությամբ):
- III քառորդ՝ «լճացած». այս դեպքում մեծ մասամբ տարածված է «սովորական» ձեռնարկատիրությունը, որտեղ համեմատաբար շատ են անհրաժեշտությունից դրված ձեռնարկատիրությամբ զբաղվողները:
- IV քառորդ՝ «հավակնոտ». չնայած նորարարության ցածր մակարդակին, այս երկրներում ձեռնարկությունները ցանկանում են նպաստել դրական փոփոխություններին և տեղափոխվել «առաջ մղող» դաշտ:

Մատրիցի միջոցով վերլուծության արդյունքում կարելի է փաստել, որ աշխարհում նորարարական ձեռնարկատիրության միջոցով առաջընթաց ապահովող երկրները հիմնականում ունեն բարձր եկամուտներ (Լյուքսեմբուրգ, Կանադա, Ավստրալիա, Իռլանդիա, ԱՄՆ, Իսրայել, Շվեյցարիա), ինչն ունի տրամաբանական բացատրություն: Չնայած դրան, մի շարք զարգացած երկրներ, ինչպես օրինակ՝ Իտալիան, Մեծ Բրիտանիան, Նիդեռլանդները, Հունգարիան և Սինգապուրը հայտնվել են «հավակնոտների» շարքում: Այսինքն՝ չնայած նորարարության համեմատաբար ցածր մակարդակին, այս երկրներում ձեռնարկությունները նպատակ ունեն աշխարհում ինչ-որ բան փոխելու: Այս խմբում հայտնված երկրներից են նաև Պերուն, Քաթարը, Լիբիան, Լեհաստանը և այլն:

Հայաստանը և միջին կամ ցածր եկամուտներ ունեցող մի շարք այլ երկրներ, ինչպես օրինակ՝ Բրազիլիան, Սենեգալը, Ռուսաստանը, Իրանը, Բոսնիան և Կարելի է բնութագրել որպես «լճացած», քանի որ այստեղ նորարարությունները համաշխարհային միջին ցուցանիշից ցածր են, և ձեռնարկատիրական մոտիվացիան հիմնականում ուղղված է ապրուստի միջոց վաստակելուն:

Ավելացնենք նաև, որ նորարար ձեռնարկատիրության հանդեպ ակադեմիական և քաղաքական շրջանակներում մեծ հետաքրքրությունը կարելի է բացատրել նաև ՄԱԿ-ի կողմից 2015 թվականին ընդունված կայուն զարգացման 17 նպատակներով («The 17 sustainable development goals (SDGs)»)՝ ուղղված համաշխարհային հիմնախնդիրները հաղթահարելուն: Տնտեսական զարգացմանը դրական նպաստելուց բացի, նորարարական ձեռնարկությունների կողմից ստեղծված արժեքը այս նպատակների իրականացման կարևոր գործիքներից է, ինչն ուղղակիորեն արտահայտվում է ութերորդ (Խթանել համապարփակ և կայուն տնտեսական աճ, զբաղվածություն և արժանապատիվ աշխատանք բոլորի համար) և իններորդ (Ստեղծել դիմակայուն ենթակառուցվածքներ, աջակցել կայուն արդյունաբերության զարգացմանը և խթանել նորարարությունը), իսկ անուղղակիորեն՝ մյուս գրեթե բոլոր նպատակներում²⁸:

²⁸ Տե՛ս <https://sdgs.un.org/2030agenda>

Եզրակացություններ: Այսպիսով՝ նորարարական ձեռնարկատիրության միջոցով ստեղծվող և իրականացվող նորարարությունը բարդ, սակայն, միևնույն ժամանակ, մարդկության առջև ծառայած տարբեր, այդ թվում՝ տնտեսական խնդիրներ հաղթահարելու գործիք է: Նորարարական ձեռնարկատիրության վերաբերյալ կարծիքները տարբեր են, սակայն տեսաբանների հիմնական մասը համաձայնում է դրա՝ «սովորական» ձեռնարկատիրությունից առավել մեծ արդյունք ստեղծելու մասին պնդմանը:

Տվյալները փաստում են, որ նորարարական ձեռնարկատիրության մակարդակի վրա տարածաշրջանի ազդեցությունը շատ թույլ է: Մյուս կողմից՝ հողվածում մշակված կոռեկցիոն վերլուծությունները ցույց են տալիս՝ որքան բարձր է նորարարական ձեռնարկատիրության մակարդակը երկրում, այնքան ավելի հավանական է իրական բարձր եկամուտները և դրանց համաչափ բաշխումը (ի տարբերություն «սովորական» ձեռնարկատիրության): Միևնույն ժամանակ, նորարարական ձեռնարկատիրության մակարդակի և գործազրկության մակարդակի, ինչպես նաև նորարարական ձեռնարկատիրության մակարդակի և աղքատության մակարդակի միջև փոխադարձ ակներև կապ չի հայտնաբերվել:

Բացի դրանից, նպատակ ունենալով հասկանալու նորարարական ձեռնարկատիրության առանձնահատկություններն ըստ երկրների, աշխատանքում կիրառվել է նաև մեկ այլ մոտեցում, որի միջոցով երկրները, ըստ ձեռնարկատիրական մոտիվացիայի և նորարարության, դասակարգվել են 4 խմբի՝ «առաջ մղող», «հարկադրված նորարար», «լճացած», «հավակնոտ»: Ինչպես կարելի էր ակնկալել, երկրների մեծ մասը գտնվում է վերջին երկու խմբում: Հայաստանը հայտնվել է «լճացած» դասակարգում ունեցող երկրների շարքում, ինչը բացատրվում է եկամուտների, նորարարություններ իրականացնելու կարողությունների և ենթակառուցվածքների ոչ բավարար մակարդակով:

Տվյալները փաստում են նաև, որ չնայած այլ երկրների համեմատությամբ Հայաստանում շատ են ձեռներեցության ձգտում ունեցողները, նրանց մեծ մասին չի հաջողվում դառնալ նորարար ձեռնարկատեր: Բացի դրանից, Հայաստանում նորարարության վերաբերյալ ինքնագնահատականը չափազանց գերագնահատված է, ինչը, թերևս, նույնպես ենթակառուցվածքների պակասի հետևանք է:

Օգտագործված գրականություն

1. Ազգային վիճակագրական կոմիտե, Մեթոդաբանական նշումներ ինովացիայի վիճակագրության վերաբերյալ, 2017, https://www.armstat.am/file/article/met_notes_for_innovation_statistics_arm.pdf
2. Ամերիա ՓԲԸ, «Ձեռնարկատիրության համաշխարհային զեկույց. Հայաստան - 2019/2020», 2020, <https://ameriaadvisory.am/wp-content/uploads/2020/08/GEM-ArmenianFinal.pdf>
3. «Համաշխարհային մրցունակության զեկույց», <https://www.weforum.org/reports/the-global-competitiveness-report-2020>

4. Համաշխարհային նորարարության ինդեքս, https://www.wipo.int/global_innovation_index/en/
5. Acs Z.J., Desai S., Hessels J., Entrepreneurship, economic development and institutions. *Small Bus Econ*, 31, 2008.
6. Aghion Ph., Howitt P., A model of growth through creative destruction. *Econometrica*, 60(2), 1992.
7. Aparicio S., Urbano D., Gómez D., The role of innovative entrepreneurship within Colombian business cycle scenarios: A system dynamics approach. *Futures*, 2016, <https://www.sciencedirect.com/science/article/abs/pii/S0016328716300465>
8. Audretsch D.B., Bönte W., Keilbach M., Entrepreneurship capital and its impact on knowledge diffusion and economic performance, *J Bus Venturing*, 23, 2008.
9. Baumol W.J., Entrepreneurship, management, and the structure of payoffs. Cambridge, MA: MIT Press, 1993.
10. Bosma N., The geography of entrepreneurial activity and regional economic development. Utrecht University, 2009, <https://dspace.library.uu.nl/handle/1874/32315>
11. Carlsson B., Braunerhjelm P., McKelvey M., Olofsson C., Persson L., Ylinenpää H., The evolving domain of entrepreneurship research. *Small Bus Econ*, 41, 2013.
12. Cliff J. E., Jennings P. D., Greenwood R., New to the game and questioning the rules: The experiences and beliefs of founders who start imitative versus innovative firms. *Journal of Business Venturing*, 21 (5), 2006.
13. Dahlstrand Å. L., Stevenson L., Innovative entrepreneurship policy: Linking innovation and entrepreneurship in a European, *Annals of Innovation & Entrepreneurship*, vol.1. 2010, http://www.innovationandentrepreneurship.net/index.php/aie/article/view/5602/html_34
14. Dejardin M., Linking net entry to regional economic growth, *Small Bus Econ* 36 2011.
15. Drucker P., Innovation and entrepreneurship: Practice and principles. New York: Harper & Row, 1985.
16. Dyer J. H., Gregersen H. B., Christensen C., Entrepreneur behaviors, opportunity recognition and the origins of innovative ventures. *Strategic Entrepreneurship Journal*, 2 (4), 2008.
17. Edison H., Ali N.B., Torkar R., Towards innovation measurement in the software industry. *Journal of Systems and Software*, No 86(5), 2013.
18. Feldman M.P., The character of innovative places: entrepreneurial strategy, economic development, and prosperity. *Small Bus Econ* 43, 2014.
19. Gemconsortium, GEM 2013 Global Report, <https://www.gemconsortium.org/file/open?fileId=48772>
20. GEMConsortium, Global entrepreneurship monitor 2020 Global Report, <https://www.gemconsortium.org/report/gem-2019-2020-global-report>
21. Henrekson M., Johansson D., Gazelles as job creators: a survey and interpretation of the evidence, *Small business economics*, 35(2), 2010.

22. <https://www.gemconsortium.org/about/gem/1874>
23. Marta Peris-Ortiza, João J.M. Ferreirab, Cristina I. Fernandes, Do total early-stage entrepreneurial activities (TEAs) foster innovative practices in OECD countries? 2017, <https://scihub.se/https://www.sciencedirect.com/science/article/abs/pii/S0040162517309071>
24. Ordeñana X., Vera-Gilces P., Zambrano-Vera J., High-growth or innovative entrepreneurship, who is leading the way to economic growth? A panel data approach, 2019.
25. Reynolds P., Bosma N., Autio E., Hunt S., De Bono N., Servais I., Chin N., Global entrepreneurship monitor: Data collection design and implementation 1998–2003. Small Bus Econ 24, 2005.
26. Romer P., Endogenous technological change. Journal of Political, Economy-98, 1990, https://web.stanford.edu/~klenow/Romer_1990.pdf
27. Schumpeter J.A., The theory of economic development, Cambridge, MA: Harvard University Press, 1934.
28. Simmons S., Wiklund J., Levie J., Stigma and business failure: Implications for entrepreneurs' career choices. Small Business Economics, 42 (3), 2014.
29. Urbano D., Aparicio S., Querol V., Social progress orientation and innovative entrepreneurship: an international analysis, 2016, <https://link.springer.com/article/10.1007/s00191-016-0485-1>
30. Waasdorp P., Innovative entrepreneurship: A Dutch policy perspective in Entrepreneurship in the Netherlands: Innovative entrepreneurship. New policy challenges. Snijders J., Laag A. van der, (Ed.), EIM Business & Policy Research, 2002.

ԱՌՈՒՄ

Ասպրանտ Ակադեմիա գոսուդարստեննոյ ցւրաւենյա Րեսպուբլիկա Արմենյա

Իննովացիոննոյ քրեդրինիմաթելստւոյ վ քոնթեքսթե քոնոմիքսքոյ ըւզւիթյա.– Իննովացիա յաւլյաթյա ըւզւիթելեմ քոնոմիքի, ըրազաթաթյաւթյա և վ օսոսւոն վնեդրյաթյա իննովացիոննոյ քրեդրինիմաթելստւոյ. Էթա օղաթյա յաւլյաթյա սրաւնիթելնոյ նօւոյն նաւթաւենիք, նեսոսրթյա նա թո, թո իննովացիոննոյ քրեդրինիմաթելստւոյ յրաթյա յիթնեննօ վաճնոյ Րօղյա ըրեթենի յոնօմիքսքոյ, սօցիալնօյ և քոլօղիքսքոյ թրօղեմ.

Վ Րաթաթյա ընթեղօւոննոյ նա միթքե վեթո յիթյա սսթնօթյա իննովացիա և իննովացիոննոյ քրեդրինիմաթելստւոյ. Նա օսօւե օղաթյա լիթերաթյա ըրազաթաթյա կօնքեթյա թոնօղօ յոնթեղենիք իննովացիոննոյ քրեդրինիմաթելստւոյ. Էթո յոնթեղենիք մօղյաթյա մեթօղօղիքսքոյ թազօյ ըրա ըալթեթրինիթ նաւթնօյ յիթեղօւոննօյ և սթաթիսթիքսքոյ աՆալիթա. Մյա թաթքե թրեւեթի սրաւնիթելնօյ աՆալիթ ըաՆնօյ օղ ւրօղնե իննովացիոննոյ քրեդրինիմաթելստւոյ վ ըրաճնօյ սթրաՆաթյա (վ թոն թիթե վ սօթեթաՆիք ս թրեդրինիմաթելստւօյ մօուուաթիթյա), թոթօյ թօնթալ թրաՆ.

Кроме того, чтобы получить представление о роли инновационного предпринимательства в экономике, была проанализирована взаимосвязь между уровнем инновационного предпринимательства и другими факторами, характеризующими экономику, что может стать новым подходом для проведения дальнейших исследований в области инноваций и инновационного предпринимательства в Армении.

Ключевые слова: *предпринимательство, инновации, инновационное предпринимательство, предпринимательская мотивация, цели устойчивого развития (ЦУР).*

JEL: L26, O32

DOI: 10.52174/1829-0280_2021_4_140

НАКОВ TARPOSHYAN

PhD Student of the Public Administration Academy of the Republic of Armenia

Innovative Entrepreneurship in the Context of Economic Development. – Innovation is a natural engine that drives the economy, which is developed and mainly implemented by innovative enterprises. This field is a rather new scientific direction, despite the fact that innovative entrepreneurship plays a vital role in solving economic, social and environmental issues.

Within the framework of this paper, first of all, we have studied the essence of innovation and innovative entrepreneurship. A concept of a complete definition of innovative entrepreneurship has been developed based on the literature review. This definition can serve as a methodology for further scientific research and statistical analysis. We have conducted also comparative analysis of data on the level of innovative entrepreneurship in different countries (including by combining it with entrepreneurial motivation) to understand the potential of the countries.

In addition, in order to get an idea of the role of innovative entrepreneurship in the economy, the relationship between the level of innovative entrepreneurship and other factors that characterize the economy was analyzed. The latter can become a new perspective for further research in the field of innovation and innovative entrepreneurship in Armenia.

Keywords: *entrepreneurship, innovation, innovative entrepreneurship, entrepreneurial motivation, sustainable development goals (SDG).*

JEL: L26, O32

DOI: 10.52174/1829-0280_2021_4_140